Մամլո հաղորդագրություն
ԱՄՀ առաքելության այցը Հայաստան

Սեպտեմբերի 16, 2008թ.

ԱՄՀ աշխատակազմի թիմը, Հայաստանի գծով ԱՄՀ առաքելության ղեկավար տիկին Մարտա Կաստելո-Բրանկոյի գլխավորությամբ, ս.թ. սեպտեմբերի 3-16 գտնվել է Երևանում՝ ՀՀ կառավարության, Կենտրոնական բանկի (ԿԲ), միջազգային դոնոր համայնքի և մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ հանդիպելու նպատակով: ԱՄՀ փոխտնօրեն պարոն Լորենսո Պերեսը ևս մասնակցել է քաղաքականության վերաբերյալ եզրափակիչ քննարկումներին: Առաքելության նպատակն էր ուսումնասիրել վերջին տնտեսական զարգացումները, համաձայնության գալ 2009թ. բյուջեի վերաբերյալ և Հայաստանի համար ԱՄՀ օժանդակությամբ նոր ծրագրի շուրջ բանակցություններ վարել:

Մակրոտնտեսական կատարողականը և հեռանկարները

ՀՆԱ-ի կայուն աճը պահպանվել է, սակայն գնաճային ճնշումները դեռ մեծ են: Առայժմ Վրաստան-Ռուսաստան հակամարտությունն ըստ ամենայնի էական բացասական ազդեցություն չի ունեցել աճի հեռանկարի վրա և, եթե լարվածությունը չշարունակվի, ապա այս տարի հնարավոր կլինի ապահովել 10 տոկոս իրական աճի տեմպ: Տարեկան գնաճն օգոստոսին հասել է 11.5 տոկոսի, հիմնականում պայմանավորված արտաքին ցնցումներով, սակայն նաև ներքին պահանջարկի ավելացման հաշվին՝ պայմանավորված եկամուտների աճով, վարկավորման արագ աճով և խոշոր արտարժութային ներհոսքերով: Ակնկալվում է, որ դրամավարկային քաղաքականության և հարկաբյուջետային քաղաքականության խստացումը, ինչպես նաև սննդամթերքի և վառելիքի միջազգային գների վերջերս արձանագրված անկումը մինչև տարվա վերջ գնաճի ցուցանիշը կվերադարձնի շուրջ 7.5 տոկոսի: Առաջիկա մի քանի տարիների ընթացքում կպահպանվի կայուն աճը, իսկ գնաճը կկայունանա՝ կենտրոնական բանկի նպատակադրած 4 տոկոսի շրջանակում:

Մակրոտնտեսական ներկա պայմաններում հարկաբյուջետային քաղաքականությունը կարող է առավել ակտիվ կայունացնող դեր կատարել՝ մասնավորապես այս տարի որդեգրելով առավել խիստ հարկաբյուջետային դիրք: Առայժմ 2008թ. բյուջեի կատարումը շրջահայաց է՝ պայմանավորված եկամուտների բարձր կատարողականով և ծախսերի թերակատարմամբ՝ չնայած միջին կենսաթոշակների 60 տոկոս բարձրացմանը: Ելնելով նշվածից՝ մենք

ակնկալում ենք, որ 2008թ. հարկաբյուջետային պակասուրդը բյուջեով նախատեսվածից զգալի ցածր կլինի: 2009թ. անհրաժեշտ կլինի պահպանել խիստ հարկաբյուջետային քաղաքականությունը՝ օգնելով գնաճը պահպանել ցածր մակարդակում:

Մյուս գների աճի վրա սննդամթերքի և էներգակիրների գների բարձրացման ազդեցությունը սահմանափակելու նպատակով ԿԲ աստիճանաբար իր քաղաքականության տոկոսադրույքը բարձրացրել է՝ 2007թ. հունիսի 4.5 տոկոսից 2008թ. սեպտեմբերին հասցնելով 7.75 տոկոսի: Այնուհանդերձ, մասնավոր հատվածի վարկավորման և դրամավարկային ագրեգատների աճի արագ տեմպը պահպանվում է՝ արտացոլելով ուժեղ ներքին պահանջարկը և բանկային վարկավորման տոկոսադրույքների վրա դրամավարկային քաղաքականության դեռևս սահմանափակ ազդեցությունը:

Ընթացիկ հաշվի պակասուրդի մեծացումը աստիճանաբար ավելի մտահոգող է դառնում: Թեև մասնավոր տրանսֆերտները շարունակել են կայուն լինել, ընթացիկ հաշվի վատթարացումը պահպանվել է: Սննդամթերքի և էներգակիրների բարձր գների և ներմուծման նկատմամբ ուժեղ պահանջարկի պայմաններում ներմուծումը շարունակել է արագ աճել, իսկ արտահանումը՝ դանդաղել: Ներմուծման նկատմամբ պահանջարկի ավելացման հետևանքով արժևորման ճնշումները նվազել են. մինչ այժմ՝ 2008թ. ընթացքում դրամ դոլար փոխարժեքը ընդհանուր առմամբ կայուն է եղել:

Կառուցվածքային բարեփոխումներ

Նոր կառավարությունը հստակ գերակայություն է տալիս հարկային և մաքսային բարեփոխումներին: Կառավարությունը հաստատել է համակողմանի և հավակնոտ ծրագիր՝ հարկային վարչարարությունն առավել արդյունավետ դարձնելու և տնտեսավորող սուբյեկտների համար առավել հավասար պայմաններ ստեղծելու նպատակով: Հարկային պահանջների կատարումը փոքր ձեռնարկությունների համար առավել հեշտացնելու նպատակով՝ 2009թ. հունվարից կսահմանվի ԱԱՀ-ի 58.3 միլիոն ՀՀ դրամի շեմ: 2010թ. սկսած տոնավաճառները հաստատագրված ռեժիմից կտեղափոխվեն ԱԱՀ և եկամտահարկի ընդհանուր ռեժիմ: Սակայն դեռ շարունակվում են արտահանողներին ԱԱՀ վերադարձի ձևակերպման ուշացումները, ինչը բացասաբար է անդրադառնում արտահանողների վրա: Իշխանությունները նախատեսում են միջազգային լավագույն փորձին համապատասխան բարեփոխել ԱԱՀ վերադարձի գործընթացը, զրոյացնել ԱԱՀ ուշացած վերադարձի գծով կուտակված պահանջները և ԱԱՀ վերադարձի բոլոր պահանջների ձևակերպումն իրականացնել օրենքով սահմանված ժամկետում: Ֆինանսական հատվածում իշխանությունները սահմանել են նոր օրենդրական պահանջներ՝ սպառողների

պաշտպանությունը, շուկայի թափանցիկությունը և ֆինանսական միջնորդությունը բարելավելու նպատակով: Ի վերջո, իրականացվում են կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի ներդրման նախապատրաստական աշխատանքներ:

ԱՄՀ նոր ծրագիր

ԱՄՀ նախորդ եռամյա ծրագրի շրջանակում, որն ավարտվել է 2008թ. մայիսին, Հայաստանն արձանագրեց երկնիշ տնտեսական աճ, միանիշ գնաճ և աղքատությունը զգալի կրճատվեց: Այնուամենայնիվ, մի քանի ոլորտներում անհրաժեշտ է կառուցվածքային բարեփոխումների միջոցով առավել առաջընթաց ապահովել, մասնավորապես՝ հարկային քաղաքականության և հարկային և մաքսային վարչարարության ոլորտներում: Կառավարությունը դիմել է ԱՄՀ նոր ծրագիր իրականացնելու խնդրանքով՝ բարեփոխումների անավարտ ծրագրին օժանդակելու նպատակով: Ելնելով մինչ օրս արձանագրված առաջընթացից՝ ԱՄՀ նոր ծրագրով նախորդ ծրագրերի համեմատ ավելի քիչ ֆինանսավորում կհատկացվի: Ծրագրի հիմնական նպատակն է ազդարարել մակրոտնտեսական քաղաքականությունների և կառուցվածքային բարեփոխումների ծրագրին ԱՄՀ աջակցությունը՝ ցածր եկամտով երկրի կարգավիճակից զարգացող տնտեսության կարգավիճակի անցում կատարելու ժամանակ՝ այդպիսով խթանելով համաշխարհային տնտեսությունում Հայաստանի ինտեգրումը:

Նոր ծրագրի շրջանակում սահմանված կառուցվածքային նախապայմանները հիմնականում կսևեռվեն հարկային վարչարարության և հարկային քաղաքականության բարեփոխումների վրա՝ հաշվի առնելով գործարար միջավայրի, ֆինանսական միջնորդության, տնտեսական աճի և աղքատության կրճատման վրա դրանց դրական ազդեցությունը:Ավելին, ծրագիրը նպատակ է հետապնդում հարկաբյուջետային քաղաքականությունը դարձնել պահանջարկի կառավարման առավել արդյունավետ գործիք՝ բարելավելով հարկաբյուջետային շրջանակը և ուժեղացնելով դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությամբ զբաղվող մարմինների աշխատանքների համակարգումը: